

## ԳԻՆՈՒ ԱՐԱԳԱՑՐԱԾ ՄԱԴԵՐԱՑՈՒՄԸ ԿՈՆՑԱԿԱՅԻՆ ԴԻՐՏԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՏ ՄՈՒԾԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ<sup>1</sup>

Լ. ԶԱՆՓՈԼԱԴՅԱՆ ԵՎ Ն. ՔԱԶՈՒՄՈՎ

Հայկ. ՍՍՌ Խաղողագործության, գիճեգործության և պաղաքութության  
փոտա-հետազոտական ինստիտուտ

Մադերայի պատրաստման տեխնոլոգիայում : իմնական պրոցեսը հանդիսանում է օդի ներթափանցման պայմաններում գինու տաքացումը կաղնու տակառներում: Այդ պրոցեսը կապված է գինու մեծ կորուսների և մեծ շենքերի հրկարտե տաքացման հետ: Նոր մեթոդի խնդիրը հանգում է տակառներում (կամ այլ հերմետիկ տարայի մեջ) գինու մադերացման ժամկետները կրճատելուն և բարձրորակ մադերա ստանալուն:

Մադերայի որակը բնորոշող գործոններից մեկը գինու բաղադրությունն է: Ա. Պրեռբաժենսկին և Վ. Բերգը (1) նշում են, որ մադերացումը բարելավվում է գինուն 1% կաղնու տաշեղներ ավելացնելուց: Գ. Աղաբալյանցն (2) առաջարկում է չոր գինենյութերը մադերացման ենթարկել: Բարձրորակ մադերա ստանալու համար Մ. Գերասիմովը (3) մեծ տեղ է հատկացնում իաղողի տեսակին: Բ. Քազումովը (4) դիտել է մադերայի որակի բարելավումը և մադերացման պրոցեսների արագացումը քաղցուն շեշով և շանչով թրմելիս: Վ. Նիլովը և Ի. Մկուրիսինը ցույց են տվել, որ մադերացվող գինուն մակարդների ավտոլիզատորների ավելացումը, մուգ գույն և բնորոշ համ ու հոտ ունեցող մելանոփինների գոյացման հետևանքով, բարելավում է մադերայի որակը:

Գինու մադերացման համար իբրև հիմնական կոմպոնենտներ, որոնք խիստ ազդում են արտադրանքի որակի վրա, պետք է համարել դարադան և ազտային միացությունները: Մադերացման պրոցեսը, կաղնու տակառներում գինին

<sup>1</sup> Հոդվածի հեղինակի կողմից առաջարկված գինու մադերացման մեթոդի համար արվել է հեղինակային վկայական:

հասունացնելիս, նրա մեջ եղած դաբաղանյութերի քանակությունն ավելանում է: Ազոտային միացությունների աղբյուր ծառայում է միայն գինին, Մադերացման դեպքում ազոտային միացությունների քանակությունը նվազում է: Սակայն, այն գինենյութերը, որոնք հարուստ են ազոտային և դաբաղան միացություններով, ավելի լավ են մադերացվում: Հետևապես, այդպիսի գինենյութերի ստացմանն ուղղված միջոցաւումները պետք է հանգեցնեն մադերայի որակի բարելավմանը:

Վերը նշվածից ելնելով, առաջարկվում է օգտագործել կոնյցինտրացված կոնյակային դիրացը՝ մադերացված գինենյութը դաբաղան և ազոտային նյութերից պատրաստված էքստրակտով հարստացնելու համար:

Կոնյակային դիրացը իրենից ներկայացնում է գինու թորումից առաջացած կաթսային մնացորդը, որը չի օգտագործվում: Թորումից հետո թորման կաթսայում մնում են լիորվող էքստրակտիվ միացություններ, գիներաբաղման և ազոտային նյութեր, մոխրային տարրերի, շաքարի և այլ միացություններ:

Կոնյակային գինենյութերը թորվում են նոր վիճակում և սովորաբար պարունակում են մինչև 1% մակարդային մնացորդներ: Տաքացնելիս, մակարդային բջիջների ավտոլիզի հետևանքով, գինին հարստանում է ամինաթթուներով, որոնք մեծ քանակությամբ պարունակվում են դիրտի մեջ և մասնակցում են մադերայի գոյացմանը:

Կոնյակային դիրտի ավելացումով գինենյութերի փորձնական մադերացման ժամանակ ստացվել են հետևյալ արդյունքները (աղյուսակ 1):

Ազգական պարունակությունը մադերացված գինու մեջ

Ա պ լ ո ւ ս ա կ 1

Փոքածի կարիքանությունը	10 գ էքստրակարին ընկնող ընդհանուր ազոտը մգ-ով		մադերացված գինու մեջ մադերացված գինու մեջ
	մինչև մադերա- ցումը	մադերա- ցումից հետո	

Զեղով թրմած գինենյութը նույն կոնցենտրացիա լակային դիրտի ավելա- ցումով՝ ? հ/լ . . .	1540	1250	18,6
	1830	684	62,7

Դիրտից ազոտային միացությունները ավելի մեծ շափով են ռեակցիայի մեջ մտել, քան գինենյութերից: Վերջին դեպքում մադերացումն ավելի դանդաղ էր ընթանում, քան կոնյակային դիրտ ավելացված նմուշում:

Կոնյակային դիրտը գինենյութը խիստ հարուստացնում է դաբաղման նյութերով, տրոնց առաջատար դերը գինու մադերացման գործում ապացուցված է շատ հետազոտություններով:

Դիրտի կիրառման մեթոդիկան հետևյալն է: Կոնյակային դիրտն ընտրվում է առավելապես սպիտակ գինու լավորակ տեսակներից (ընտրելու ժամանակ ցանկալի է օգտագործել աշնանային թորման դիրտը): Պոմպով դիրտը մղվում է վակուում ապարատի մեջ և շոգեհարվում մինչև կոնցենտրացիա շոր նյութի 50—100 հ/լ: Պատրաստի կոնցենտրացիա լցվում է տակառների մեջ և մադերացման համար նախատեսված նյութի հետ միասին մատուցվում է քաղցրատորին՝ գինու չոր նյութի 7 հ/լ հաշվով: Խնամքով խառնելուց հետո գինենյութը պոմպով մղվում է մադերացին կամերան:

Երկարատև պահպանման անհրաժեշտության դեպքում, բորբոքնելուց խոսափելու համար, կոնցենտրացիա պետք է պահել սառը տեղում: Կոնցենտրացիա գինենյութի մադերացումը կատարվում է սովորական եղանակով: Մադերացման ժամկետի ավտոմատացումից հետո անհրաժեշտ է ստուգել պղնձի պարունակությունը գինենյութի մեջ: Պղնձի բարձր պարունակության դեպքում կատարվում է շրջասունձում դեղին արյան աղով: Գինենյութի մեջ դիրտի կոնցենտրացիա ներմուծելու հետևանքով մադերացման ժամկետը կրճատվում է, և, այդ կապակցու-

թյամբ, կորուստները պակասում են: Կոնյակային դիրտի (իրրև կոնցենտրացի) ներմուծման դեպքում մադերացված նյութի որակը բարձրանում է:

Նոր մեթոդով փորձերն անց են կացվել լարուատորական պայմաններում, իսկ այնուհետև երեսնի գինու կոմբինատում՝ 1955 թ. 110 դկլ ծավալով, 1956 թվականին՝ 280 դկլ, 1957 թվականին՝ 600 դկլ և 1958 թվականին՝ 2000 դկլ: Եթե հաշվի առնենք, որ մադերացի կուպաժման ժամանակ օգտագործվում է մադերացված նյութի 10—15 %, ապա 1958 թվականին մադերացին խցում պահված գինենյութերից կարելի է պատրաստել 15—20 հազ. դկլ մադերա:

1956 թ. փորձնական և ստուգիչ նյութերը պահվում էին 9 ամիս: Կորուստները միատեսակ էին և հավասար 18 %-ի, սակայն, ըստ որակի, փորձնական նյութն ավելի բարձր էր և կոմբինատի գեգուստացիոն հանձնաժողովը այն գնահատեց 8,36 բարով, այնինչ ստուգիչ նմուշն ստացավ 7,86 բար:

1957 և 1959 թթ. փորձերը կատարվել են ավելի մեծ ծավալով, համապատասխանորեն՝ 600 և 2000 դկլ: 1957 թ. կոնյակային դիրտի կոնցենտրացիա գինենյութը պահվել էր մադերացին խցում 6 ամիս շարունակ և համեմատվում էր արտադրական գինենյութի հետ (առանց ավելացման), որը պահվել էր 9 ամիս: Կոմբինատի գեգուստացիոն հանձնաժողովը փորձնական նյութը գնահատել էր 8,18 բարով և ստուգիչը՝ 8,95 բարով: Սկզբանական գինենյութերի և մադերացմանից ստացված գինենյութերի անալիզները բերված են 2-րդ աղյուսակում:

Այսպիսով, միևնույն պայմաններում, կոնցենտրացիա ավելացմամբ մադերացման դեպքում, 6 ամսվա ընթացքում ավելի լավ արդյունք է ստացվել, քան 9 ամսվա ընթացքում սովորական մադերացին գինենյութերի մադերացման դեպքում:

Նոր մեթոդի առավելությունները երևում են նաև քիմիական բաղադրություններից: Փորձնական գինու մեջ ավելի շատ են պղնձի բնույթը ու պերօքսիդները, որոնք ակտիվ կերպով մասնակցում են մադերացի համի ու հոտի գոյացմանը: Կոնցենտրացիա ավելացումը բարձրացնում է նաև խաղողի թթվայնությունը:

Ա Պ Լ Պ Վ Ա Ս Կ Հ 2

Մոռուղում	Փ ռ ձ
Միզրնական գինին միջնական գարեգումը	+ 1,6
Մազերացումից հետո (թամբին)	- 1,6
Միզրնական գինին կրնացնարարություն մասնացումը	- 1,6
Մազերացումից հետո (թամբին)	- 1,6

Ապիտա %	-ով	19,3	17,1	18,6
Շաքար	%-ով	3,0	2,6	3,0
Տիտրացվող թթուներ	գ/լ	3,7	7,3	4,2
Ցնորդ թթուներ	գ/լ	1,0	2,3	1,4
Ալգեհիդներ	մգ/լ	35,1	40,2	35,1
Աշետալներ	մ/լ	6,9	54,0	6,7
Էֆստրական	գ/լ	45,8	63,3	51,8
Դարաղման նյութեր	գ/լ	0,50	0,63	0,71
Պոլիֆեններ	մգ/լ	70,7	147,6	99,6
Պիրոքսիդներ	մգ/լ	—	1,55	—
Դիգուտացիրոն գնահատական	—	8,05	—	8,16

Նոր մեթոդի էֆեկտիվությունը կախանում է հետևյալում.

1. Մազերային խցում գինենյութի պահպանման ժամկետը կրճատվում է 9-ից մինչև 6 ամիս, այսինքն՝ 34%-ով:

2. Գինենյութերի կորուստները նվազում են 18%-ից մինչև 12%: Երկանի գինու կոմբինատում կորուստները 3200 դկլ-ի փոխարեն կկազմեն 2200 դկլ: Գինենյութերի տնտեսումը մեկ շրջապատճեղում կազմում է 1100 դկլ, երկու շրջապատճեղում, համապատասխանութեան՝ 2200 դկլ:

3. Մազերացման ժամկետի կրճատման կապակցությամբ հնարավորությունը է ստեղծվում բարձրացնել մատերային խուցերի արտադրողա-

կանությունը և ապահովել տարեկան երկու անգամ պատրաստի նյութերի հանումը:

4. Էքստրակտների ավելացումը համի ու հոտի տեսակետից նյութը դարձնում է ավելի ուժեղ. բարձրանում է տիտրացվող թթվայնությունը, բարելավվում է մաղերայի որակը: Հավասար պայմաններում կոնցենտրացիոն մաղերանյութը կուպաժելիս, կարելի է ավելի քիչ քանակությամբ մաղերա օգտագործել և ավելացնել մաղերայի արտադրությունը: Արհեստական բարձրացումը թույլ կտա օգտագործել գինեներության հյուսիսային շրջանների քիչ էքստրակտիվ գինիները:

5. Նոր մեթոդի կիրառումից առաջացող տընտեսումը, դրամական արտահայտությամբ, միայն երկանի գինու կոմբինատում, կկազմի տարեկան մուտ 166 հազ. տուբի:

6. Հնարավորություններ են բացվում օգտագործելու կոնյակային դիրտի օգտագործման համար: Դիրտը մինչև հիմա անօգտագործելի է մնում և անդառնալիորեն կորչում է:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

1. Преображенский А. А. и Берг В. А. Производство мадеры в герметической таре. Садоводство, виноградарство и виноделие Молдавии, № 3, 1958.

2. Агабальянц Г. Г. Новая технологическая схема приготовления мадеры. Материалы научно-технической конференции работников винодельческой промышленности и НТО Пищевой промышленности, 1957.

3. Герасимов М. А. Технология виноделия, 485 стр., 1952.

4. Казумов Н. Б. Научные основы технологии мадеры. На правах рукописи.

## ԿՈՎԻ ԿԱՇՎԻ ԵՎ ԽՈԶԻ ԽՐՈՄԻ ԵՐԿՅԱՋ ԴԱԲԱՂՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Ի. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևանի կաշվի գործարանի գլխավոր ինժեներ

### Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետի ՊԳՏԿ-ի ավագ գիտական աշխատող

Հայտնի է, որ խրոմային դարաղման շերմաստիճանի բարձրացումը ոչ միայն առաջ է բերում փոխազեղցնության պրոցեսի արագացում, այլև դարաղման միացության լրացուցիչ ամրա-

ցում: Այդ մասին են վկայում լեռկ մողթու մի-

շոցով քրոմի ամրացման վրա քրոմսուլֆատի